Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի փետրվարի 6-ի 2003/10/ԵՀ հրահանգ

Ֆիզիկական գործոններից (աղմուկից) առաջացող ռիսկերին ենթարկվող աշխատողների առողջության ու անվտանգության նվազագույն պահանջների մասին

(Տասնյոթերորդ առանձին հրահանգ՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 137(2) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1), որը ներկայացվել է Աշխատավայրում անվտանգության ապահովման, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

խորհրդակցելով Տարածաշրջանների հարցերով կոմիտեի հետ,

գործելով Պայմանագրի 251–րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն (3) և ելնելով Հաշտեցման կոմիտեի կողմից 2002 թվականի նոյեմբերի 8-ին հաստատված համատեղ տեքստից,

Քանի որ

1) Պայմանագրով նախատեսվում է, որ Խորհուրդը, հրահանգների միջոցով, կարող է ընդունել մասնավորապես աշխատանքային միջավայրի բարելավման խթանմանն ուղղված նվազագույն պահանջներ՝ աշխատողների անվտանգության և առողջության պահպանման ավելի բարձր մակարդակ ապահովելու նպատակով: Նման հրահանգներում ձեռնպահ են մնում այնպիսի վարչական, ֆինանսական և իրավական սահմանափակումներ սահմանելուց, որոնք կարող են խոչընդոտել փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծումն ու զարգացումը,

2) չնայած Պայմանագրի համաձայն՝ սույն Հրահանգը չի արգելում անդամ պետություններին պահպանել և ներմուծել առավել խիստ պաշտպանիչ միջոցներ, սակայն սույն Հրահանգի

իրականացումը չպետք է հիմք հանդիսանա անդամ պետություններում արդեն տիրող իրավիճակի վատթարացման համար,

3) «Աշխատավայրում աղմուկի ազդեցությանը վերաբերող ռիսկերից աշխատողների պաշտպանության մասին» Խորհրդի 1986 թվականի մայիսի 12-ի 86/188/ԵՏՀ հրահանգով (4) դրույթ է սահմանվել, որի համաձայն, այն կարող է վերաուսումնասիրվել Խորհրդի կողմից՝ Հանձնաժողովից ստացված առաջարկի համաձայն՝ նպատակ ունենալով նվազեցնելու համապատասխան ռիսկերը՝ հաշվի առնելով, մասնավորապես, գիտական և տեխնոլոգիական առաջընթացը,

4) աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության մասին ծրագրի վերաբերյալ Հանձնաժողովի հաղորդագրությամբ (5) պահանջվում է, որպեսզի ընդունվեն աշխատավայրում անվտանգությունը խթանելու միջոցներ, որոնք նպատակ ունեն ընդլայնելու 86/188/ԵՏՀ հրահանգի գործողության շրջանակը և վերագնահատելու շեմային նորմերը: 1987 թվականի դեկտեմբերի 21-ի «Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության մասին» իր որոշման մեջ (6) Խորհուրդը հաշվի է առել այս հանգամանքը,

5) «Աշխատողների հիմնարար սոցիալական իրավունքների մասին» Համայնքի խարտիան իրականացնելուն վերաբերող գործողությունների ծրագրի մասով Հանձնաժողովի հաղորդագրությամբ նախատեսվում է առողջության և անվտանգության նվազագույն պահանջների ներմուծում՝ ֆիզիկական գործոններից առաջացող ռիսկերի համար, որոնց ենթարկվում են աշխատողները: 1990 թվականի սեպտեմբերին Եվրոպական պառլամենտն այնպիսի որոշում է ընդունել, որը վերաբերում է այդ գործողությունների ծրագրին (7): Այդ որոշմամբ Եվրոպական պառլամենտը կոչ արեց Հանձնաժողովին, մասնավորապես, կազմել հատուկ հրահանգ՝ աշխատավայրում աղմուկի, թրթռման և որևէ այլ ֆիզիկական գործոնի հետևանքով առաջացող ռիսկերի մասին,

6) որպես առաջին քայլ՝ Եվրոպական պառլամենտը և Խորհուրդն ընդունեցին «Ֆիզիկական գործոններից (թրթռում) առաջացող ռիսկերին ենթարկվող աշխատողների առողջության ու անվտանգության նվազագույն պահանջների մասին» 2002 թվականի հունիսի 25–ի 2002/44/ԵՀ հրահանգը (Տասնվեցերորդ առանձին հրահանգ `89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով) (8),

7) որպես երկրորդ քայլ՝ հարկ է ներմուծել այնպիսի միջոցներ, որոնք կպաշտպանեն աշխատողներին աղմուկից առաջացող ռիսկերից՝ կապված նրանց առողջությանը և անվտանգությանը հասցվող ազդեցությունների հետ, մասնավորապես, լսողությանը

հասցվող վնասի առումով: Այդ միջոցները ոչ միայն նախատեսված են ապահովելու յուրաքանչյուր աշխատողի առողջությունը և անվտանգությունը՝ առանձին–առանձին, այլ նաև ստեղծելու պաշտպանության նվազագույն հիմք Համայնքի բոլոր աշխատողների համար՝ խուսափելու համար մրցակցության հնարավոր խաթարումից,

8) ներկայումս գիտությունը հնարավորություն չի տալիս սահմանելու համար առողջության և անվտանգության համար աղմուկի այն ազդեցությունները, որոնց ենթարկվելը կարող է աղմուկի հետ կապված առողջության և անվտանգության վտանգ առաջացնել՝ հատկապես, երբ աղմուկի ազդեցությունները չեն վերաբերում լսողական բնույթի ազդեցություններին,

9) աղմուկից պաշտպանվելու համակարգը պետք է սահմանափակվի նման ազդեցությունների սահմանմամբ, պետք է ավելորդ մանրամասներից զուրկ լինի, ներառի այնպիսի նպատակներ, որոնց պետք է հասնել, սկզբունքներ, որոնց պետք է հետևել և հիմնարար արժեքներ, որոնք պետք է օգտագործվեն այնպես, որ անդամ պետությունները կարողանան համարժեքորեն կիրառել նվազագույն պահանջները,

10) աղմուկի ազդեցության մակարդակը հնարավոր է առավել արդյունավետ նվազեցնել, եթե աշխատատեղերի և աշխատավայրերի նախագծերում ներառվեն կանխարգելիչ միջոցներ ու ընտրվեն այնպիսի աշխատանքային սարքավորումներ, ընթացակարգեր և մեթոդներ, որոնց միջոցով նախապատվություն է տրվում սկզբնաղբյուրում ռիսկերի նվազեցմանը: Այդպիսով, աշխատանքային սարքավորումներին և մեթոդներին վերաբերող դրույթները կնպաստեն աշխատողների պաշտպանությանը: «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության բարելավմանն ուղղված միջոցառումների ներմուծման մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգի 6(2) հոդվածում (9) սահմանված ընդհանուր կանխարգելիչ սկզբունքների համաձայն՝ խմբակային պաշտպանիչ միջոցները առաջնահերթություն ունեն անհատական պաշտպանիչ միջոցների նկատմամբ,

11) Միջազգային ծովային կազմակերպության A 468(12) որոշմամբ ընդունված «Նավերի վրա աղմուկի մակարդակի մասին» օրենսգրքով է կարգավորվում նավերի վրա աղմուկի մակարդակի նվազեցումը: Անդամ պետությունները պետք է իրավունք ունենան նախատեսելու անցումային ժամանակահատված՝ ծովում նավարկող նավերի անձնակազմի համար,

12) աշխատողների վրա աղմուկի ազդեցությունը ճիշտ գնահատելու համար օգտակար է կիրառել նպատակների գնահատման մեթոդը, որով հղում է կատարվում ISO 1999:1990

ընդունված ստանդարտին: Գնահատված կամ օբյեկտիվորեն չափված նորմերը պետք է որոշիչ դեր խաղան գործողություններ նախաձեռնելու համար՝ աղմուկի ուժգնության նվազագույն և առավելագույն ընդունելի նորմերի դեպքում: Աղմուկի ուժգնության սահմանային նորմերն անհրաժեշտ են՝ խուսափելու համար աշխատողների լսողությանը չվերականգնվող վնաս հասցնելուց. ականջին հասնող աղմուկը պետք է աղմուկի ուժգնության սահմանային նորմերից ցածր լինի,

13) երաժշտության և զվարճանքի ոլորտների յուրահատկությունները գործնական կարգավորում են պահանջում՝ սույն Հրահանգում սահմանված դրույթների արդյունավետ կիրառում ապահովելու համար: Անդամ պետությունները պետք է իրավունք ունենան օգտվելու անցումային ժամանակահատվածից վարքագծի կանոնագիրք մշակելու համար, որը գործնական կարգավորում կապահովի՝ օժանդակելու համար այդ ոլորտների աշխատողներին և գործատուներին՝ սույն Հրահանգով սահմանված պաշտպանության մակարդակ ձեռք բերելու համար:

14) գործատուներն աղմուկի ազդեցությանն ենթարկվելու ռիսկերի առնչությամբ պետք է համապատասխանեցնեն իրենց գործունեությունը տեխնիկական առաջընթացին և գիտությանը՝ նպատակ ունենալով բարելավել աշխատողների առողջության և անվտանգության պաշտպանությունը,

15) քանի որ սույն Հրահանգը 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով առանձին հրահանգ է, այդ հրահանգը վերաբերում է աշխատողների համար աղմուկի ազդեցությանը, սակայն չի հակասում սույն Հրահանգում ներառված առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին,

16) սույն Հրահանգը ներքին շուկայի սոցիալական ուղղվածության ձևավորմանը միտված գործնական քայլ է,

17) սույն Հրահանգի իրականացման համար անհրաժեշտ ակտերը պետք է ընդունվեն՝ «Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների կիրառման ընթացակարգերը սահմանելու մասին» Խորհրդի 1999 թվականի հունիսի 28–ի թիվ 1999/468/ԵՀ որոշման համաձայն (10),

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԲԱԺԻՆ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Նպատակները և գործողության ոլորտը

1. Սույն Հրահանգով, որը 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով տասնյոթերորդ առանձին հրահանգն է, սահմանվում են աշխատողների առողջության և անվտանգության ռիսկերից պաշտպանության նվազագույն պահանջները, որոնք առաջանում են կամ կարող են առաջանալ աղմուկի ազդեցությունից, մասնավորապես, լսողականին վերաբերող ռիսկերի առումով:

2. Սույն Հրահանգի պահանջները կիրառվում են այն գործողությունների նկատմամբ, որոնց դեպքում աշխատողներն իրենց աշխատանքի ընթացքում ենթարկվում կամ կարող են ենթարկվել աղմուկի հետևանքով առաջացող ռիսկերի:

3. 89/391/ԵՏՀ հրահանգն ամբողջությամբ կիրառվում է 1-ին պարբերության մեջ նշված ամբողջ ոլորտի նկատմամբ՝ չհակասելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներով, որպես ռիսկի կանխորոշիչներ օգտագործվող ֆիզիկական պարամետրերը սահմանվում են ըստ հետևյալի՝

ա) պիկ ձայնային ճնշում (ppeak) «C» հաճախականությամբ կշռված ակնթարթային ձայնային ճնշման առավելագույն արժեք.

բ) աղմուկի օրական ուժգնության ընդունելի մակարդակ (LEX, 8ժ) (դեցիբել (A) 20 միկրոպասկալ հարաբերությամբ)՝ աղմուկի ազդեցության մակարդակների միջին կշռված ժամանակն անվանական ութ ժամ տևողությամբ աշխատանքային օրվա համար՝ ըստ ISO 1999: 1990, 3.6 կետ միջազգային ստանդարտի: Այն ներառում է աշխատավայրում առկա բոլոր ձայները՝ ներառյալ անսպասելի ձայները.

գ) աղմուկի շաբաթական ուժգնության ընդունելի մակարդակ (LEX,8ժ)՝ աղմուկի օրական ներգործության մակարդակների միջին կշռված ժամանակն անվանական շաբաթվա հնգական ութ ժամ տևողությամբ աշխատանքային օրերի համար՝ ըստ ISO 1999: 1990, 3.6 կետ միջազգային ստանդարտի (2–րդ ծանոթագրություն):

Հոդված 3

Աղմուկի ուժգնության սահմանային նորմեր և աղմուկի ուժգնության ընդունելի նորմեր, որոնց դեպքում հատուկ գործողություններ են պահանջվում

1. Սույն Հրահանգի նպատակներով, աղմուկի ուժգնության սահմանային նորմերը և աղմուկի ուժգնության ընդունելի նորմերը (որոնց դեպքում հատուկ գործողություններ են պահանջվում) աղմուկի օրական ազդեցության և պիկ ձայնային ճնշման համար սահմանվում են հետևյալ կերպ՝

ա) աղմուկի ուժգնության սահմանային նորմեր՝ ուժգնության մակարդակ (LEX), 8 ժամը = 87 դեցիբելի(A) և առավելագույն ձայնային ճնշումը = 200 Պա(11)–ի՝ համապատասխանաբար;

ա) աղմուկի ուժգնության առավելագույն ընդունելի նորմեր՝ ուժգնության մակարդակ (LEX), 8 ժամը՝ 85 դեցիբել (A) և առավելագույն ձայնային ճնշումը= 140 Պա(12)–ի՝ համապատասխանաբար.

ա) աղմուկի ուժգնության նվազագույն ընդունելի նորմեր՝ ուժգնության մակարդակ (LEX), 8 ժամը = 80 դեցիբելի (A) և առավելագույն ձայնային ճնշումը = 112 Պա(13)–ի՝ համապատասխանաբար:

2. Երբ կիրառվում են աղմուկի ուժգնության սահմանային նորմերը՝ աշխատողի համար թույլատրելի ազդեցության մակարդակը որոշելիս հաշվի է առնվում աշխատողի կողմից կրվող անհատական լսողության պաշտպանիչ սարքերով ձայնի մեղմացման գործոնը: Աղմուկի ուժգնության ընդունելի նորմերում հաշվի չեն առնվում նման պաշտպանիչների ազդեցությունը:

3. Պատշաճ հիմնավորված դեպքերում, եթե օրական աղմուկի ազդեցությունը որոշ գործողությունների դեպքում էականորեն տարբերվում է տարբեր աշխատանքային օրերի ընթացքում, ապա աղմուկի ուժգնության սահմանային նորմեր և աղմուկի ուժգնության ընդունելի նորմեր կիրառելիս, աղմուկի մակարդակը գնահատելու համար աղմուկի

ազդեցության օրական մակարդակի փոխարեն, որին ենթարկվում են աշխատողները, կարելի է օգտագործել աղմուկի ազդեցության շաբաթական մակարդակը՝ պայմանով որ՝

ա) աղմուկի շաբաթական ազդեցության մակարդակը՝ ըստ պատշաճ դիտանցման արդյունքների, չի գերազանցում 87 դեցիբել (A) աղմուկի ուժգնության սահմանային նորմը. և

բ) համապատասխան միջոցներ են նախաձեռնվել՝ այդ գործողությունների հետ կապված ռիսկը նվազագույնի հասցնելու համար:

ԲԱԺԻՆ II

ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 4

Ռիսկերի որոշումը և գնահատումը

1. 89/391/ԵՏՀ հրահանգի 6(3) և 9(1) հոդվածներում սահմանված պարտավորություններն իրականացնելու նպատակով, գործատուն գնահատում և, անհրաժեշտության դեպքում, չափում է ձայնի մակարդակը, որին ենթարկվում են աշխատողները:

2. Կիրառվող մեթոդները և սարքավորումները պետք է համապատասխանեն տվյալ պահին առկա պայմաններին, մասնավորապես՝ չափվող ձայնի բնորոշիչներին, աղմուկի ազդեցության տևողությանը, շրջակա միջավայրի գործոններին և չափիչ սարքավորումներին բնորոշ հատկանիշներին:

Այդ մեթոդներով և սարքավորումներով պետք է հնարավոր լինի սահմանել 2-րդ հոդվածում նշված պարամետրերը և որոշել, թե տվյալ դեպքում արդյունքները գերազանցում են 3-րդ հոդվածում սահմանված նորմերը, թե ոչ:

3. Կիրառվող մեթոդներից է նմուշառումը, որը պետք է ներկայացուցչական լինի աշխատողի վրա աղմուկի ազդեցության առումով:

4. 1-ին պարբերության մեջ նշված գնահատումը և չափումը պլանավորվում և իրականացվում են իրավասու ծառայությունների կողմից պատշաճ միջակայքերով՝ հատուկ ուշադրություն դարձնելով 89/391/ԵՏՀ հրահանգի 7-րդ հոդվածի դրույթներին, որոնք վերաբերում են պահանջվող իրավասու ծառայություններին կամ անձանց: Գնահատման և

(կամ) չափման արդյունքում ստացված տվյալները, որոնք վերաբերում են աղմուկի ազդեցությանը, պետք է պահվեն պատշաճ եղանակով, այնպես որ հնարավոր լինի դրանցից օգտվել հետագայում:

5. Սույն հոդվածը կիրառելիս՝ չափման արդյունքները գնահատելիս պետք է հաշվի առնվեն չափման սխալները, որոնք սահմանվում են չափագիտական պրակտիկայի հիման վրա:

6. 89/391/ԵՏՀ հրահանգի 6(3) հոդվածի համաձայն, ռիսկի գնահատում իրականացնելիս, գործատուն հատուկ ուշադրություն պետք է դարձնի հետևյալ հանգամանքներին՝

ա) աղմուկի ազդեցության մակարդակը, տեսակը և տևողությունը՝ ներառյալ անսպասելի ձայնի ազդեցությունը.

բ) սույն Հրահանգի 3-րդ հոդվածով սահմանված աղմուկի ուժգնության սահմանային նորմերը և աղմուկի ուժգնության ընդունելի նորմերը.

գ) այն ազդեցությունները, որոնք վերաբերում են բարձր ռիսկային խմբերի պատկանող աշխատողների առողջությանը և անվտանգությանը.

դ) եթե տեխնիկապես հնարավոր է՝ աշխատողների առողջության և անվտանգության վրա ազդեցությունները, որոնք առաջանում են աղմուկի ու աշխատանքի հետ կապ ունեցող օրթոտոքսիկ նյութերի փոխազդեցությունից, ինչպես նաև աղմուկի և թրթռման փոխազդեցությունից.

ե) աշխատողների առողջության և անվտանգության համար անուղղակիորեն ազդող ազդեցությունները, որոնք առաջանում են աղմուկի ու ազդանշանների, կամ այլ ձայների միջև փոխազդեցությունից, որոնք նախատեսված են պատահարների ռիսկայնությունը նվազեցնելու համար.

զ) աղմուկի առաջացման մասին տեղեկությունները, որոնք տրամադրվում են աշխատանքային սարքավորումներ արտադրողների կողմից՝ Համայնքի համապատասխան հրահանգների համաձայն.

է) այլընտրանքային աշխատանքային սարքավորման առկայությունը, որը նախատեսված է աղմուկը նվազեցնելու համար.

ը) գործատուի պատասխանատվությամբ նորմալ աշխատաժամանակը գերազանցող տևողությամբ աղմուկի առկայությունը.

թ) բժշկական հսկողության արդյունքում ստացված համապատասխան տեղեկությունները, իսկ հնարավորության դեպքում՝ նաև գրավոր տեղեկությունները.

ժ) լսողության պաշտպանիչ սարքերի առկայությունը, որոնք ձայնը նվազեցնելու հնարավորություններ ունեն:

7. Գործատուն պետք է տնօրինի ռիսկի գնահատումը 89/391/ԵՏՀ հրահանգի 9(1)(ա) հոդվածի համաձայն և պետք է որոշի, թե ինչպիսի միջոցներ պետք է ձեռնարկվեն՝ սույն Հրահանգի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածների համաձայն: Ռիսկի գնահատումը պետք է գրանցվի համապատասխան կրիչների վրա՝ ազգային իրավունքի և գործելակերպի համաձայն: Ռիսկերի գնահատումը կանոնավորապես թարմացվում է հատկապես այն դեպքում, երբ տեղի են ունեցել այնպիսի էական փոփոխություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել դրա արդիականությունը կամ երբ դա անհրաժեշտ է բժշկական ստուգումների արդյունքների հիման վրա:

Հոդված 5

Աղմուկի ազդեցությունը նվազեցնելու կամ դրանից խուսափելու վերաբերյալ դրույթները

1. Աղմուկի հետ կապված ռիսկերը պետք է վերացվեն սկզբնաղբյուրում կամ դրանք պետք է նվազագույնի հասցվեն՝ հաշվի առնելով տեխնիկական առաջընթացը և ռիսկի կառավարման միջոցները սկզբնաղբյուրում:

Նման ռիսկերի կրճատումը պետք է հենվի 89/391/ԵՏՀ հրահանգի 6(2) հոդվածում սահմանված կանխարգելման ընդհանուր սկզբունքների վրա և պետք է հաշվի առնի, մասնավորապես՝

ա) աշխատանքի մյուս մեթոդները, որոնց դեպքում աղմուկի ազդեցությունն ավելի քիչ է.

բ) համապատասխան աշխատանքային սարքավորումների ընտրությունը՝ հաշվի առնելով կատարվող աշխատանքի տեսակը, հնարավորինս քիչ աղմուկի առաջացումը՝ ներառյալ աշխատողներին այնպիսի աշխատանքային սարքավորումների տրամադրումը, որոնց դեպքում գործում են աղմուկի չափը նվազեցնելուն ուղղված Համայնքի դրույթները.

գ) աշխատավայրերի և աշխատատեղերի կառուցվածքն ու նախագիծը,

դ) աղմուկը նվազագույնի հասցնելու նպատակով աշխատանքային սարքավորումների ճիշտ օգտագործման մասին համապատասխան տեղեկությունների տրամադրումն աշխատողներին և նրանց ուսուցման անցկացումը,

ե) աղմուկի նվազեցումն այնպիսի տեխնիկական միջոցներով, որոնք՝

i) նվազեցնում են օդում տարածվող աղմուկը, օրինակ՝ պաշտպանիչ միջոցների, մեկուսացված տարածության, աղմուկակլանիչ թաղանթների միջոցով.

ii) նվազեցնում են կառուցվածքով պայմանավորված աղմուկը, օրինակ՝ խլացուցիչներով կամ մեկուսիչներով.

զ) աշխատանքային սարքավորումների, աշխատավայրերի, աշխատավայրերի կառավարման համակարգերի շահագործման համապատասխան ծրագրերը,

է) աղմուկի նվազեցման նպատակով աշխատանքի կազմակերպումը.

ը) աղմուկի տևականության և ուժգնության սահմանափակումը,

ii) բավարար հանգստի ժամ ապահովող աշխատանքային գրաֆիկների սահմանումը:

2. Եթե 4–րդ հոդվածում սահմանված ռիսկերի գնահատմամբ պարզ է դառնում, որ աղմուկը գերազանցում է աղմուկի ուժգնության ընդունելի նորմերը, որոնց դեպքում հատուկ գործողություններ են պահանջվում, ապա գործատուն պարտավոր է սահմանել և կիրառել աղմուկի ազդեցությունը նվազեցնելուն ուղղված տեխնիկական և (կամ) կազմակերպչական միջոցների այնպիսի ծրագիր, որով հաշվի են առնվում 1-ին պարբերության մեջ նշված մասնավոր միջոցները:

3. 4-րդ հոդվածում նշված ռիսկի գնահատման հիման վրա՝ այն աշխատավայրերը, որտեղ աշխատողները կարող են ենթարկվել աղմուկի առավելագույն ընդունելի նորմերից բարձր աղմուկի, պետք է առանձնացվեն համապատասխան նշանով: Նման տարածքները պետք է նաև սահմանազատվեն, և մուտքն այդ տարածքներ պետք է սահմանափակվի, եթե նման տեխնիկական հնարավորություններ կան, և աղմուկի առկայությունը հիմնավորում է դա:

4. Եթե գործունեության բնույթից ելնելով՝ աշխատողի համար օգտակար է հանգստի հարմարություններից օգտվելը՝ գործատուի պատասխանատվության ներքո, ապա նման հանգստի վայրերում աղմուկի մակարդակը պետք է համապատասխան լինի այդ վայրերի նպատակին և օգտագործման պայմաններին:

5. 89/391/ԵՏՀ հրահանգի 15–րդ հոդվածի համաձայն՝ գործատուն պետք է համապատասխանեցնի սույն հոդվածում սահմանված միջոցառումները հատկապես ռիսկային խմբին պատկանող աշխատող անձանց պահանջներին:

Հոդված 6

Անձի պաշտպանությունը

1. Եթե աղմուկի ազդեցությունից առաջացող ռիսկերը հնարավոր չէ կանխարգելել այլ միջոցներով, ապա աշխատողներին պետք է տրամադրվի անհատական կրման համար նախատեսված լսողական պաշտպանիչներ, որոնք պետք է օգտագործվեն Խորհրդի՝ «Աշխատավայրում աշխատողների կողմից անձնական պաշտպանության սարքերի օգտագործման նպատակով՝ առողջության և անվտանգության նվազագույն պահանջների մասին» 1989 թվականի նոյեմբերի 30-ի 89/656/ԵՏՀ հրահանգի դրույթների համաձայն (89/391/ԵՏՀ)(14) 16(1) հոդվածի և 89/391/ԵՏՀ հրահանգի 13(2) հոդվածի իմաստով՝ երրորդ առանձին հրահանգ) և ստորև սահմանված պայմաններին համապատասխան՝

ա) եթե աղմուկը գերազանցում է աղմուկի ուժգնության նվազագույն ընդունելի նորմերը, ապա գործատուն պետք է աշխատողներին տրամադրի անհատական պաշտպանության լսողական սարքեր.

աբ) եթե աղմուկը հավասար է կամ գերազանցում է ուժգնության առավելագույն ընդունելի նորմերը, ապա գործատուն պետք է աշխատողներին տրամադրի անհատական պաշտպանության լսիչ սարքեր.

գ) անհատական պաշտպանության լսիչ սարքերը պետք է օգտագործվեն այնպես, որ հնարավոր լինի վերացնել լսողական ռիսկը կամ այն հասցնել նվազագույնի:

2. Գործատուն բոլոր ջանքերը գործադրում է՝ աշխատողների անձնական պաշտպանության լսիչ սարքերի կրումն ապահովելու նպատակով և պատասխանատու է սույն հոդվածի համաձայն ձեռնարկված միջոցների արդյունավետությունն ստուգելու համար:

Հոդված 7

Աղմուկի ազդեցության սահմանափակումը

1. Աշխատողները ոչ մի դեպքում չպետք է ենթարկվեն աղմուկի ուժգնության սահմանային նորմերը գերազանցող աղմուկի ազդեցությանը, ինչպես սահմանված է 3(2) հոդվածում:

2. Եթե սույն Հրահանգն իրականացնելու նպատակով միջոցներ են ձեռնարկվել, բայց, այնուամենայնիվ, աղմուկի ուժգնության սահմանային նորմերը գերազանցող աղմուկ է հայտնաբերվել, ապա գործատուն պետք է՝

ա) ձեռնարկի անհապաղ միջոցներ՝ աղմուկի մակարդակը սահմանային նորմերից նվազեցնելու համար .

բ) հայտնաբերի, թե ինչու է աղմուկի գերազդեցություն առաջացել, և

գ) փոփոխություն մտցնի պաշտպանության և կանխարգելման միջոցներում՝ խուսափելու համար աղմուկի կրկնությունից:

Հոդված 8

Աշխատողներին տեղեկատվության տրամադրումը և նրանց վերապատրաստումը

Չհակասելով 89/391/ԵՏՀ հրահանգի 10–րդ և 12–րդ հոդվածներին՝ գործատուն պետք է ապահովի, որ աղմուկի ուժգնության նվազագույն ընդունելի նորմերին հավասար կամ դրանից բարձր մակարդակում աղմուկի ազդեցության ենթարկվող աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների համար անհրաժեշտ է տրամադրել բավարար տեղեկատվություն և աղմուկի ազդեցությունից առաջացող ռիսկերի վերաբերյալ նրանց հետ վերապատրաստում անցկացնել, մասնավորապես, հետևյալի մասով՝

ա) նման ռիսկերի բնույթը.

բ) սույն Հրահանգի իրականացման նպատակով ձեռնարկված միջոցառումները, որոնց նպատակը աղմուկի ռիսկը վերացնելը կամ նվազագույնի հասցնելն է՝ ներառյալ այն հանգամանքները, երբ նման միջոցները կիրառվում են.

գ) սույն Հրահանգի 3-րդ հոդվածով սահմանված աղմուկի ուժգնության սահմանային նորմերը և աղմուկի ուժգնության ընդունելի նորմերը, որոնց դեպքում պահանջվում են հատուկ գործողություններ և որոնք սահմանված են 3-րդ հոդվածում.

դ) սույն Հրահանգի 4–րդ հոդվածի համաձայն կատարված աղմուկի գնահատման և չափման արդյունքները՝ դրանց նշանակության և պոտենցիալ ռիսկերի հետ կապված բացատրությունների հետ միասին.

ե) անձնական պաշտպանության լսիչ սարքերի ճիշտ օգտագործումը.

զ) ինչու և ինչպես հայտնաբերել ու տեղեկացնել լսողությանը հասցված վնասի նախանշանների մասին.

է) այն հանգամանքները, որոնց դեպքում աշխատողները պետք է անցնեն բժշկական հետազոտություն և բժշկական հետազոտության նպատակը՝ սույն Հրահանգի 10-րդ հոդվածի համաձայն.

ը) աղմուկի ազդեցության նվազեցմանը նպաստող անվտանգ աշխատանքային գործելակերպերը:

Հոդված 9

Աշխատողների հետ խորհրդակցությունը և նրանց մասնակցությունը

Սույն Հրահանգով կարգավորվող հարցերի շուրջ աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների հետ քննարկումներն իրականացվում են և նրանց մասնակցությունն ապահովվում է՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 11-րդ հոդվածի համաձայն սույն Հրահանգում ներառված խնդիրների շուրջ, մասնավորապես՝

– 4-րդ հոդվածում նշված ռիսկերի գնահատում և ձեռնարկվելիք միջոցների սահմանում.

– աղմուկից առաջացող ռիսկերի վերացմանը կամ դրանց նվազեցմանը ուղղված գործողություններ, որոնք նշված են 5-րդ հոդվածում.

– անձնական պաշտպանության լսողական սարքերի ընտրությունը, որը նշված է 6(1)(գ) հոդվածում:

ԲԱԺԻՆ III

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 10

Առողջական վիճակի հսկողությունը

1. Չհակասելով 89/391/ԵՏՀ հրահանգի 14–րդ հոդվածին՝ անդամ պետությունները պետք է ընդունեն այնպիսի դրույթներ, որոնք կապահովեն, որ բոլոր աշխատողները ենթարկվեն բժշկական հսկողության այն դեպքում, եթե սույն Հրահանգի 4(1) հոդվածում նախատեսված գնահատման և չափման արդյունքներով ցույց է տրվում, որ նրանց առողջությունը վտանգված է: Այս դրույթները՝ ներառյալ բժշկասանիտարական փաստաթղթում սահմանված պահանջները և դրանց առկայությունը, պետք է նախատեսվեն՝ ազգային օրենսդրության և (կամ) գործելակերպի համաձայն:

2. Այն աշխատողը, որը ենթարկվում է աղմուկի ուժգնության առավելագույն ընդունելի նորմերը գերազանցող ազդեցության, պետք է բժշկի կամ բժշկի պատասխանատվության ներքո՝ մեկ այլ համապատասխան մասնագետի մոտ իր լսողությունը ստուգելու իրավունք ունենա՝ ազգային իրավունքին և (կամ) գործելակերպին համապատասխան: Աշխատողները պետք է կարողանան օգտվել նաև կանխարգելիչ ստուգաչափական թեստավորումից, եթե նրանք ենթարկվում են աղմուկի ուժգնության նվազագույն ընդունելի նորմերը գերազանցող աղմուկի, այն դեպքերում, երբ 4(1) հոդվածում սահմանված գնահատման և չափման արդյունքներով ցույց է տրվում, որ առողջության համար ռիսկ գոյություն ունի:

Այդ ստուգումների նպատակը աղմուկի պատճառով առաջացած լսողության կորուստը վաղ ախտորոշելը և լսողական ֆունկցիան պահպանելն է:

3. Անդամ պետությունները նախատեսում են միջոցներ՝ ապահովելու համար, որ յուրաքանչյուր աշխատողի համար, ով բժշկական հսկողություն է անցնում 1–ին պարբերության համաձայն, ստեղծվեն անհատական բժշկական քարտեր և դրանք մշտապես թարմացվեն: Բժշկական քարտերում լրացվում են իրականացված բժշկական հսկողության արդյունքների ամփոփ տեղեկությունները: Դրանք պետք է պահվեն համապատասխան ձևով այնպես, որ հնարավոր լինի դրանցից օգտվել այլ ժամանակ ևս՝ հաշվի առնելով գաղտնիությունը:

Համապատասխան գրառումների օրինակները տրամադրվում են իրավասու մարմնին նրա խնդրանքով: Յուրաքանչյուր աշխատող, պահանջելու դեպքում, կարող է ձեռք բերել իր անձին վերաբերող բժշկական տեղեկությունները:

4. Եթե լսողական ֆունկցիայի ստուգումների հետևանքով հայտնաբերվել է, որ աշխատողը լսողական ֆունկցիայի իրական խանգարում ունի, ապա բժիշկը կամ բժշկի թելադրանքով համապատասխան մասնագետը պետք է գնահատի, թե արդյոք վնասը աշխատատեղում աղմուկի ենթարկվելու արդյունք է, թե ոչ: Եթե այդպես է, ապա՝

ա) բժիշկը կամ մյուս համապատասխան որակավորված անձը տեղեկացնում է աշխատողին անձամբ իրեն վերաբերող արդյունքների մասին.

բ) Գործատուն պետք է՝

i) ուսումնասիրի 4-րդ հոդվածի համաձայն կատարված ռիսկերի գնահատումը.

ii) ուսումնասիրի 5–րդ և 6-րդ հոդվածներում նախատեսված միջոցառումները՝ ուղղված ռիսկերի վերացմանը կամ նվազեցմանը.

iii) 5–րդ և 6-րդ հոդվածներով նախատեսված ռիսկերի վերացմանն կամ նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման ժամանակ հաշվի առնի բժշկի, այլ համապատասխան որակավորված անձի կամ իրավասու մարմնի խորհուրդները՝ ներառյալ տվյալ աշխատողին մեկ այլ՝ անվտանգ աշխատանքի փոխադրելու հնարավորությունը և

iv) ապահովի շարունակական բժշկական հսկողություն և ուսումնասիրի նմանատիպ ազդեցության ենթարկված այլ աշխատողների առողջական վիճակը:

Հոդված 11

Շեղումները

1. Բացառիկ իրավիճակներում, երբ կախված աշխատանքի բնույթից, անհատական պաշտպանության լսիչ սարքերի լիակատար և պատշաճ օգտագործումը կարող է մեծացնել առողջության կամ անվտանգության ռիսկը, քան դրանց բացակայությունը, անդամ պետությունները կարող են շեղում կատարելու իրավունք տալ 6(1)(ա) և (բ) ու 7–րդ հոդվածների դրույթներից:

2. 1–ին պարբերությունում նշված շեղումներ կատարելու իրավունքը տրվում է անդամ պետությունների կողմից տվյալ ոլորտի երկու կողմերին և, հարկ եղած դեպքում՝ բժշկության ոլորտի իրավասու մարմինների հետ խորհրդակցելուց հետո՝ ազգային օրենսդրության և գործելակերպի համաձայն: Նման շեղումներին կից պետք է տրվեն այնպիսի պայմաններ, որոնք, հաշվի առնելով հատուկ հանգամանքները, կապահովեն, որ առաջացող ռիսկերը հասցվեն նվազագույնի, և որ տվյալ աշխատողներն ուժեղացված բժշկական հսկողություն անցնեն: Այդ շեղումները պետք է վերանայվեն յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ և հանվեն, եթե այլևս չկան հիմնավորող հանգամանքներ:

3. Անդամ պետությունները պետք է չորս տարին մեկ անգամ փոխանցեն Հանձնաժողովին 1–ին պարբերությունում նշված շեղումների ցանկը՝ նշելով այն հստակ պատճառներն ու հանգամանքները, որոնց հիման վրա շեղումներ կատարելու իրավունք է տրվում:

Հոդված 12

Տեխնիկական փոփոխությունները

Զուտ տեխնիկական բնույթի փոփոխություններն ընդունվում են 13(2) հոդվածում սահմանված կարգավորիչ ընթացակարգի համաձայն և համապատասխան հետևյալին `

ա) տեխնիկական ներդաշնակեցման և ստանդարտացման ոլորտում հրահանգների ընդունում՝ կապված աշխատանքային սարքերի և (կամ) աշխատավայրերի նախագծի, կառուցման, արտադրության կամ շինարարության հետ.

բ) տեխնիկական առաջընթաց, առավել համապատասխանորեն ներդաշնակեցված եվրոպական ստանդարտներում կամ մասնագրերում փոփոխություններ, ինչպես նաև աղմուկին վերաբերող նոր հայտնագործություններ:

Հոդված 13

Կոմիտեն

1. Հանձնաժողովին պետք է աջակցի 89/391/ԵՏՀ հրահանգի 17–րդ հոդվածում նշված Կոմիտեն:

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8–րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածում նշված ժամկետը երեք ամիս է:

3. Կոմիտեն պետք է ընդունի իր ընթացակարգային կանոնները:

Հոդված 14

Վարքագծի կանոնագիրքը

Սույն Հրահանգի կիրառության համատեքստում անդամ պետությունները, սոցիալական գործընկերների հետ խորհրդակցելուց հետո, մշակում են վարքագծի կանոնագիրք՝ ազգային իրավունքի և գործելակերպի համաձայն, որտեղ գործնական ցուցումներ են տրամադրվում երաժշտության ու զվարճանքի ոլորտի աշխատողներին և նրանց գործատուներին իրենց իրավական պարտավորությունները կատարելու հարցում՝ ինչպես սահմանված է սույն Հրահանգում:

Հոդված 15

Ուժը կորցրած ճանաչելը

86/188/ԵՏՀ հրահանգը սույնով ուժը կորցրած է ճանաչվում 17(1) հոդվածի առաջին ենթապարբերության մեջ նշված ամսաթվից:

ԲԱԺԻՆ IV

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 16

Հաշվետվությունները

Անդամ պետությունները յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ սույն Հրահանգի գործնական կիրառման վերաբերյալ հաշվետվություն են տրամադրում Հանձնաժողովին՝ ներկայացնելով աշխատողների և գործատուների տեսակետները: Այն պարունակում է

առողջության վրա վնասակար ազդեցություն ունեցող աղմուկի կանխարգելման լավագույն գործելակերպերի և աշխատանքների կազմակերպման այլ ձևերի նկարագիրը անդամ պետությունների կողմից՝ նման լավագույն գործելակերպի մասին գիտելիքները փոխանցելու համար ձեռնարկված միջոցառումների հետ միասին:

Այս հաշվետվությունների հիման վրա Հանձնաժողովը իրականացնում է սույն Հրահանգի իրականացման համապարփակ գնահատում, այդ թվում՝ գիտահետազոտական տեղեկությունների համատեքստում, այդ թվում՝ հաշվի առնելով սույն Հրահանգի հետևանքները երաժշտության և զվարճանքի ոլորտների համար: Հանձնաժողովը տեղեկացնում է Եվրոպական պառլամենտին, Խորհրդին, Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեին ու Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեին դրա մասին և, անհրաժեշտության դեպքում, հանդես է գալիս առաջարկություններով:

Հոդված 17

Փոխատեղումը

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենքներ, կանոնակարգեր և վարչական ակտեր՝ նախքան 2006 թվականի փետրվարի 15-ը: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են նշված ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու եղանակները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Որոշ առանձնահատուկ պայմաններ հաշվի առնելու նպատակով՝ անդամ պետությունները կարող են, անհրաժեշտության դեպքում, նախատեսել հավելյալ հնգամյա ժամկետ՝ սկսած 2006 թվականի փետրվարի 15-ից, այսինքն՝ ընդհանուր առմամբ ութ տարի՝ ծովագնաց նավերի անձնակազմի վերաբերյալ 7-րդ հոդվածի դրույթները կատարելու համար:

Սույն Հրահանգի դրույթները կիրառելու համար գործնական ցուցումներ տրամադրող վարքագծի կանոնագիրք կազմելու հնարավորություն տալու համար անդամ

պետություններին տրամադրվում է առավելագույնը երկու տարի տևողությամբ անցումային շրջան՝ 2006 թվականի փետրվարի 15-ից, այսինքն սույն Հրահանգն ուժի մեջ մտնելու պահից ընդհանուրը հինգ տարի ժամանակահատված՝ երաժշտության և զվարճանքի ոլորտներին վերաբերող՝ սույն Հրահանգի պահանջները կատարելու համար՝ պայմանով, որ այդ ժամկետում առանձին անդամ պետությունների կողմից արդեն ձեռք բերված՝ այդ ոլորտի աշխատակազմի հետ կապված պաշտպանության մակարդակը պահպանվի:

3. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի դրույթների տեքստերը, որոնք նրանք ընդունում են կամ արդեն ընդունել են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 18

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակելու օրը:

Հոդված 19

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում 2003 թվականի փետրվարի 6-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից: